ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

«ՕԳՈՍՏՈՍԻ 23, ԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 5-ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-2014

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Օգոստոսի 23, ազգային դաշինք» իրավապաշտպան կազմակերպություն հասարակական կազմակերպությունն ստեղծվել է 1990 թվականի դեկտեմբերի 17-ին, ՀՀ արդարադատության նախարարի թիվ 29 հրամանով:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Օգոստոսի 23, ազգային դաշինք» իրավապաշտպան կազմակերպություն ՀԿ նպատակներն են՝

1. աջակցել ժողովրդավարության զարգացմանը.
2. աջակցել օրենսդրության կատարելագործմանը
3. նպաստել իրավաբանական տեղեկատվական համակարգի ստեղծմանը
4. իրականացնել զոհված ազատամարտիկների ընտանիքների իրավական պաշտպանությունը
5. իրականացնել դատաքննչական մարմինների գործունեության մասին հասարակական կարծիքի ուսումնասիրությունը
6. արձագանքել մարդու իրավունքների ոտնահարման մասին ԶԼՄ-ների հրապարակումներին
7. նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղակիորեն առնչվող իրավանորմերի հստակեցմանը և կատարելագործմանը
8. նպաստել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը նվիրված հիմնադրույթների կենսագործմանը և խախտված իրավունքների վերականգմանը՝ արդյունավետ դարձնելով իրավունքների ոտնահարման դեմ պայքարը, նպատակասլաց դարձնելով ԶԼՄ-ում իրավական հարցերի լուսաբանումն ավելի կոորդինացնել զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների գործունեությունը, կազմակերպել մարդու իրավունքների խախտման դեպքերի հրապարակային քննարկումներ
9. կալանավայրերում իրավաբանական խորհրդատվության կազմակերպումը
10. վերը նշված խնդիրների հետ կապված այլ ծրագրերի իրականացումը:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«Օգոստոսի 23, ազգային դաշինք» իրավապաշտպան կազմակերպություն ՀԿ-ն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Օգոստոսի 23, ազգային դաշիքն իրավապաշտպան կազմակերպության» ՀԿ կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.3. Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

Սերոբյան Պուշկին Մխիթարի, ՀԿ նախագահ

Որոշակի ծրագրեր իրականացնելու համար կազմակերպությունը ձևավորում է աշխատանքային խմբեր, համապատասխան մասնագետների ներգրավմամբ:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

«Օգոստոսի 23, ազգային դաշինք» իրավապաշտպան կազմակերպություն ՀԿ գործունեության ոլորտներն են՝

1. Տարբեր բնագավառներում՝ սոցիալական, իրավական, տեղեկատվական ոլորտներում Հայստանի Հանրապետությունում իրականացվող գործընթացների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացում՝ տեղեկատվական աջակցության շնորհիվ,
2. Խախտված իրավունքների վերականգնման նպատակով մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղակիորեն առնչվող իրավանորմերի հստակեցում և խախտման դեպքերի քննարկում,
3. դատաքննչական մարմինների գործունեության մասին հասարակական իրազեկում և հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացում,
4. դիմումների և բողոքների քննարկում և բարձրացված խնդիրների լուծմանն աջակցություն:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է՝ աջակցել ի նպաստ պետության և հասարակության զարգացման իրականացվող գործընթացներին: Ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում լայն հասարակության շրջանակում մարդու իրավունքների, ինչպես նաև խախտման դեպքերի քննարկման և դրանց վերացման վերաբերյալ ամբողջական տեղեկատվության տարածման միջոցով, ՀԿ-ի փորձից ելնելով, համապատասխան ոլորտներում շարունակել նպաստել իրազեկվածության բարձրացմանը, խախտված իրավունքների վերականգմանը, ամրապնդել հասարակություն-իշխանություն հետադարձ կապը:

Նշված նպատակին հասնելու համար՝ սերտորեն համագործակցել հանրապետական գործադիր, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, ՀԼՄ-ների հետ՝ օգտագործելով նաև միջազգային փորձը:

2.2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի իրականացման համար առաջիկա 5 տարիներին կազմակերպությունը նախատեսում է ֆինանսական միջոցներ ներգրավել տարբեր հիմնադրամների հայտարարած մրցույթներին մասնակցության, համանման ծրագրեր իրականացնող գրասենյակների, պետական հաստատությունների հետ համագործակցության միջոցով:

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014 թվականից սկսած՝ հինգ տարվա ընթացքում:

«Օգոստոսի 23, ազգային դաշինք» իրավապաշտպան կազմակերպություն ՀԿ-ն առաջիկա հինգ տարիներին նախատեսում է յուրաքանչյուր տարի համաչափ իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. Տարբեր ոլորտներում իրականացվող իրավական գործընթացների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացում՝ թիրախային խմբերի, լայն հասարակության, ինչպես նաև շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ,

2. Խախտումների մասին դիմումների և բողոքների քննարկում և դրանց վերացում համապատասխան պետական մարմինների և կազմակերպությունների մասնակցությամբ,

3. Ծրագրի նպատակների և ռազմավարության մասին պարբերաբար տեղեկացում ԶԼՄ-ների միջոցով,

4. Տպագիր նյութերի, տեսանյութեր, հրապարակումների պատրաստում և տարածում, իրականացվող իրավական գործընթացում առկա խնդիրների ու խոչընդոտների վերաբերյալ առանձին մասնագիտական քննարկումների նախաձեռնում, վերլուծություն և հետագա գործողությունների ճշտում,

5. Հասարակության հետ շարունակական կապի և իրազեկման արշավի արդյունքում արձանագրված հասարակության շրջանում առկա խնդիրների, առաջարկությունների ամփոփում և ներկայացում այն իրականացնող պետական մարմիններին՝ համապատասխան գործընթացներն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով:

2.4. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում «Օգոստոսի 23, ազգային դաշիքն» իրավապաշտպան միություն» ՀԿ-ն ակնկալում է իրավական ոլորտում հասարակական համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի ուղղությամբ երկրում, պետական մարմինների կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ հասարակության տեղեկացվածության բարձրացում, պետական մարմինների կողմի խախտման դեպքերի քննարկում և վերացում, պետական մարմինների կողմից իրականացվող միջոցառումների նկատմամբ հասարակության վստահության բարձրացում:

ՀԿ նախագահ՝ Պ. Սերոբյան

17.06.2014թ.